Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

N/N ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ**				
1.1.	"Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին" ՀՀ օրենքի կիրարկում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Օրենքի ընդունումից հետո	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար պայմանների ստեղծման ու հավասար հնարավորություն-ների ապահովման սկզբունքների վրա հիմնված համապա-տասխան մեխանիզմների

					մշակում
1.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին ՀՀ օրենքի կիրառումն ապահովող իրավական ակտերի մշակում և ընդունում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար պայմանների ստեղծման ու հավասար հնարավորությունն-երի ապահովման սկզբունքների վրա հիմնված և համապատասխան մեխանիզմներ ապահովող օրենսդրական դաշտ
1.3.	Աշխատունակության աստիճանի գնա-հատման հիման վրա հաշմանդամության սահմանման նոր մոդելին անցման հայեցակարգի դրույթների իրականաց-ման աշխատանքների կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամության սահմանման գործընթացի հստակեցում, անձի պահպանված աշխատունակությա ն գնահատում

1.4.	Հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների բազայի կատարելագործման և շահագործման աշխատանքների իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /21157.1 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվական բազայի ընթացիկ աշխատանքների ապահովում
2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում**				
2.1.	Մայրաքաղաք ներկրվելիք մեծ և միջին դասի 25-30 քաղաքային ավտոբուսների վրա թեքահարթակների տեղադրման աշխատաքների իրականացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	1-ին կիսամյակ	Երևանի բյուջե /20000.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու հնարավորության ապահովում
2.2.	Մայրաքաղաքի ներքաղաքային երթուղիներում ավտոբուսների ուղեսրահներում տեղադրվող գովազդային մոնիտորներով կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարում և դրանց գրառման ապահովում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), մասնավոր կազմակերպություններ	Տարվա ընթացքում	Դոնոր կազմակերպություն	Տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության ապահովում

2.3.	Երևանի բուժհաստատություններում շարժական կամ հիմնական թեքահարթակներով ապահովում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Երևանի բյուջե /7000.0 հազ. դրամ/	Բուժհաստատություններում մատչելիության ապահովում
2.4.	Երևանի պոլիկլինիկաների 1-ին հարկերում սպասարկման համար հարմարավետ սենյակներ ստեղծում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Երևանի բյուջե, դոնոր կազմակերպություններ /6000.0 հազ. դրամ/	Տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար համապատասխան մասնագետների կողմից բուժսպասարկման ապահովում
3.	**Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրեր**				
3.1.	Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի միջոցով երեխաների կրթական կարիքների գնահատում	ՀՀ ԿԳՆ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /142511.4 հազ. դրամ/	Շուրջ 120 երեխայի կրթական կարիքների գնահատում
3.2.	Հանրապետությունում 64 հանրակրթա-կան դպրոցում ներառական կրթության կազմակերպում	ՀՀ ԿԳՆ, ՀՀ մարզպե-տարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե ներառական կրթության ծրագրի շրջանակներում /884048.8 հազ. դրամ/	1659 երեխայի համար ներառական կրթության ապահովում

3.3.	Կրթության առանձնահատուկ պայ-մանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստա-տություններում	ՀՀ ԿԳՆ, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապե-տարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /2.798498.5 հազ. դրամ/	Հատուկ կարիքներ ունեցող 2639 երեխայի կրթության կազմակերպում
3.4.	Բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության ժամանակ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ ստանալու դեպքում 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար անվճար հիմունքներով կրթության ապահովում	ՀՀ ԿԳՆ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	1-ին և 2-րդ խմբի և "հաշմանդամ երեխա" կարգավիճակ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց պետական պատվերի շրջանակներում կրթության կազմակերպում
3.5.	Հատուկ կրթության ոլորտում 11 անուն դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում և հրատարակում	ՀՀ ԿԳՆ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /16000.0 հազ. դրամ/	Հատուկ կրթության կարիք ունեցող հաշմանդամերին ուսումնական ձեռնարկներով ապահովում

4.	**Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր**				
4.1.	Աշխատանք փնտրող, չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /13090.0 հազ.դրամ/, դոնոր կազմակերպու-թյուններ, հ/կ-ներ	77 հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային ունակությունների վերականգնում և մասնագիտական ուսուցում
4.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /35100.0 հազ.դրամ/	Շուրջ 90 հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատավարձի մասնակի փոխհատուցում
4.3.	Այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների և և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամություն ունեցող անձանց նյութական ծախսերի հատուցում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /446880 դրամ/	1 հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքի տեղավորում
4.4.	Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքի փորձ չունեցող գործազուրկ և աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /2925.0 հազ.դրամ /	15 հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքին փորձի ձեռքբերում, աշխատանքի տեղավորում

4.5.	Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրան-ցման համար հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ֆինանսական աջակցություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /86,0 դրամ/	Շուրջ 5 հաշմանդամություն ունեցող անձի ֆինանսական աջակցություն՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով
4.6.	Աշխատանք փնտրող չզբաղված հաշման-դամություն ունեցող անձանց համար աշ-խատատեղերի հարմարեցումը գործա-տուի մոտ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /11000.0 հազ.դրամ/	55 հաշմանդամություն ունեցող անձի համար աշխատատեղերի հարմարեցում, աշխատանքի տեղավորում
4.7.	"Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն" ՊՈԱԿ-ի գործունեության կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /16027.5 հազ. դրամ/	720 հաշմանդամություն ունեցող անձի ուսուցողական, խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների

					տրամադրում
4.8.	Հաշմանդամություն ունեցող անձինք Հայաստանում՝ որպես խոստումնալից աշխատուժ” ծրագրի իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, “Հյուման դիգնիթի ընդ փիս” հիմնադրամ	Տարվա ընթացքում	Դոնոր կազմակերպություն	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների կարգավորում Երևանի Էրեբունի-Նուբարաշեն համայնքում և Հրազդան քաղաքում
5.	**Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր**				
5.1.	Տուն ինտերնատներում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման իրականա-ցում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 50 %/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /775006.4 հազ. դրամ/ "Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ" ծրագրի շրջանակներում	Շուրջ 545 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում
5.2.	Տնային պայմաններում հաշմանդամու-թյուն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծառայությունների տրա-մադրում / հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը /	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /28248.8 հազ. դրամ/ /"Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասար-կում" ծրագրի շրջանակ-ներում/	Շուրջ 450 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում

5.3.	Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /15881.0 հազ. դրամ/	50 հաշմանդամությունն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոնում
5.4.	Տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրաում “Առաքելություն Հայաստան” ԲՀԿ-ի կողմից /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների 30 %-ը/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /50818.5 հազ. դրամ/	1260 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում
5.5.	Մտավոր խնդիրներ ունեցող դեռահասներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /17062.6 հազ. դրամ/ /24 աշխատողի աշխատավարձի վճարում "Փրկություն" հ/կ-ին/	Մտավոր խնդիրներ ունեցող 50 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկման կազմակերպում ցերեկային կենտրոնում

5.6.	Առավել կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում:	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Երևանի բյուջե /10,000.0 հազ. դրամ/	Հաշմանդամութուն ունեցող անձանց սոցիալական աջակցության միջոցով կարիքի բավարարում, սոցիալական վիճակի բարելավում:
6.	**Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող բժշկական օգնության, այդ թվում վերականգնողական ծրագրեր.**				
6.1.	Հաշմանդամների բժշկական օգնությանն ու վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց առաջնային բուժօգնության, հիվանդանոցային բուժման և դեղորայքի անվճար տրամադրման ծառայություններ՝ ըստ դիմելիության
6.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքների կազմակերպում և իրականացում "ԱՐԹՄԵԴ" ԲՎԿ-ում և "Սթրես-կենտրոն" ՓԲԸ-ում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /167,196.5 հազ. դրամ/	Շուրջ 979 հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձանց բժշկա-սոցիալական և

					հոգեկան առող-ջության վերականգնում հիվանդանոցային պայմաններում
6.3.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնողական օգնության ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկա-տվության ստացում և ամփոփում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Համակարգված վերականգնողական ծառայության կազմակերպում, վերականգնողական ծրագրերի պլանավորում
7.	**Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական, տեխնիկական և այլ օժանդակ միջոցներով ապահովման ծրագրեր.**				
7.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում, դրանց վերանորոգում, այդ թվում՝	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /858573.9 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող շուրջ 10 հազար անձանց պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում
7.1.1.	Ձայնաստեղծ սարքերով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /35000.0 հազ. դրամ/	Ձայնաստեղծ սարքի կարիք ունեցող 100 հաշմանդամություն ունեցող անձի ձայնաստեղծ սարքով ապահովում

7.1.2.	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար աչքի պրոթեզավորման իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /5850.0 հազ. դրամ/	90 հաշմանդամություն ունեցող անձի աչքի պրոթեզով ապահովում
7.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց լսողական սարքերով, լսողական սարքի ներդիրներով և սայլակներով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /110724.7 հազ. դրամ//	1700 անձի լսողական սարքերով, լսողական սարքի ներդիրներով և սայլակներով ապահովում, այդ թվում՝
7.2.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց սայլակներով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /56000.0 հազ. դրամ/	400 հաշմանդամություն ունեցող անձի սայլակներով ապահովում
7.2.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց և տարիքային կենսաթոշակառուներին ռուսական արտադրության լսողական սարքերով, 12-18 տարեկան երեխաներին և 19-25 տարեկան հաշմանդամ երիտասարդներին եվրոպական արտադրության լսողական սարքերով և մինչև 14 տարկան երեխաներին լսողական սարքի ներդիրներով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /54724.4 հազ. դրամ/	Լսողության խանգարում ունեցող 1200 անձի լսողական սարքով /1300/, 100 երեխայի լսողական սարքերի ներդիրներով /200/ ապահովում

7.2.3.	Լսողության խնդիրներ ունեցող մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքերով ապահովում /OTIKON և SIEMENS ֆիրմաների/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, "Հավատ" հ/կ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	"Հովարդ Կարագյոզյան" բարեգործական հիմնադրամ	Շուրջ 50 երեխայի լսողական սարքերով ապահովում
7.3.	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ /Բրայլյան/ տառատեսակով գրքերի, տետրերի, բյուլետենների տպագրում և "Խոսող գրքերի" ձայնագրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /10506.4 հազ. դրամ/	42327 թերթ Բրայլյան գրքերի, 1000 հատ Բրայլյան տետրերի, 74400 թերթ "Բյուլետեն" ամսագրի տպագրում, 1500 ժամ "Խոսող գրքերի" ձայնագրում
7.4.	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար "Արև" համակարգի ուսուցում և համակարգչային տեխնիկայով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե / 8124.0 հազ. դրամ/	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող 10 անձանց "Արև" համակարգով ուսուցում և համակարգչային տեխնիկայի տրամադրում
8.	**Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը հասարակություն մշակույթի և սպորտի միջոցով.**				

8.1.	Պետական աջացություն `-"Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե" հասա-րակական կազմակերպությանը "Հայաս-տանի կույրերի միավորում" հասարակա-կան կազմակերպությանը "Հայկական հատուկ օլիմպիադաներ" հասարակական կազմակերպությանը "Խուլերի հայկական սպորտային կոմիտե" հասարակական կազմակերպությանը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /9000.0 հազ. դրամ/	Շուրջ 580 հաշմանդամություն ունեցող անձի մասնակցության ապահովում կազմակերպվող միջոցառումներին
8.2.	"Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն" ՊՈԱԿ-ի Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /44,855.1 հազ դրամ/	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար արվեստի և արհեստների անվճար ուսուցում
8.3.	"Ընտանեկան գրադարանավար" ծրագրի իրականացում մարզերում /Լոռու, Շիրակի մարզեր/	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, /774.0 հազ դրամ/	Տեղաշարժման խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում
8.4.	"Արև" տեղեկատվական հաղորդակցման ծրագրի իրականացում մարզային գրադարաններում / Տավուշի մարզ/	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /400.0 հազ. դրամ/	Տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության և

					հաղորդակցության ապահովում
8.5.	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար այցելությունների կազմակերպում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակույթային կազմակերպություններ	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Մշակութային կազմակերպությունների մատչելիության ապահովում
8.6.	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ձեռքի աշխատաքների, գեղանկարների ցուցահանդեսի կազմակերպում, լավագույն մասնակիցների խրարուսում և պարգևատրում՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), հասարակական կազմակերպությոններ	Դեկտեմբեր	Երևանի բյուջե /500.0 դրամ/ Դոնոր կազմակերպություններ	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ներառումը հասարակություն մշակութային միջոցառումների միջոցով
8.7.	Երևան քաղաքի բակային սպարտակիադայի կազմակերպում 2 փուլով, ըստ տարիքային խմբերի, հաշմանդամություն ունեցող 12-18 տարեկան անձանց մասնակցությամբ	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Մայիս-սեպտեմբեր	Երևանի բյուջե /400,0 դրամ/	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ներառումը հասարակություն սպորտային միջոցառումների միջոցով
9.	**Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական**				

	կազմակերպությունների միջև.				
9.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն և նրանց կողմից իրականացվող ծրագրերի համակարգում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման հարցում համակողմանի մոտեցում
9.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին մասնակցություն և աջակցություն /խորհրդատվության, տեղեկատվության, մեթոդական աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Պետական և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խթանում
10.	**Հանրային իրազեկում**				

10.1.	Երևան քաղաքի հատուկ դպրոցներում «Ծնողավարման հմտություններ» թեմայով սեմինարների կազմակերպում:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժին (համաձայնությամբ)	2012թ	Երևան համայնքի բյուջե /50.000 դրամ/	Ծնողավարման հմտությունների ուսուցանում,երեխա – ընտանիք– հաստատություն կապի ամրապնդում:
10.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, նրանց համար հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում, քննարկումների, կլոր սեղանների կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժո-ղով, ՀՀ մարզպետա-ռաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Դոնոր կազմակերպություն	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ինտեգրում
10.3.	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուսաբանում, գրքույկների, մեթոդական ուղեցույցների տպագրում, հեռուստահաղորդումների ցուցադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /"Հանրային իրազեկ-ման միջոցառումներ" ծրագրի շրջանակում/, դոնոր կազմակերպություններ	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացում

10.4.	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները լուսաբանող կայքի /www.disabilityarmenia.am/ շահագործում	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների համալիր ներկայացում, ինչպես նաև հասարակության իրազեկության բարձրացում